

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ
ԱՐՎԵՍՏԸ**

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Բանալի բառեր – Հովհաննես Թումանյան, թարգմանություն, թարգմանաբանություն, թարգմանական աշխատանքի փիլիսոփայություն, թարգմանական աշխատանքի գնահատման չափանիշներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես Թումանյանի թարգմանական ժառանգությունը նրա կերտած լեզվաշխարհի անբաժան մասնիկն է: Այստեղ ամենից առաջ տեսնում ենք առհասարակ լեզվի գործածության հարցում բանաստեղծի անվերապահ պահանջկոտությունը, թարգմանվելիք նյութի անբասիր ընտրությունը, բնագրի բովանդակության համարժեք վերարտադրության հետևողականությունը: Թարգմանվող գործի և Թումանյան թարգմանչի հոգեհարազատության հանգամանքը արձանագրել է դեռևս **Արսեն Տերտերյանը**. «Յովհ. Թումանեանը պատկանում է բաղդաւոր բացառութիւնների թուին: Այն բոլոր թարգմանութիւնները, որ նա արել է, մի զարմանալի զուգադիպութեամբ՝ թարգման են հանդիսանում նրա զգացումներին ու յոյզերին»¹:

Դրանում կարող ենք համոզվել Հովհաննես Թումանյանի արած գրեթե բոլոր թարգմանությունների օրինակով, քանի որ բանաստեղծն ինքը նյութն ընտրելիս կողմնորոշվում է որոշակի և, բնականաբար, հոգևոր առումով իրեն հարազատ չափանիշներով: Տարբեր ժողովուրդների **հեքիաթները թարգմանելիս** նա կարողացել է լուծել երկմիասնական բարդ խնդիր. մի կողմից՝ անհրաժեշտ չափով պահպանել բնագրի ազգային երանգավորումը, մյուս կողմից՝ հեքիաթը դարձնել հայ ընթերցողի ընկալմանը համահունչ՝ ոչ միայն լեզվական, այլև հայ ժողովրդական հեքիաթներին բնորոշ

¹ **Արս. Տերտերյան**, Յովհաննես Թումանեան: Հայրենի եզերքի քնարերգուն: Վաղարշապատ, 1911, էջ 8:

մատուցման ձևի առումով: Օրինակ՝ Էրիխ Ռասպելի «Բարոն Մյունխհաուզենի զարմանալի արկածները» հեքիաթում, կարծեք, հայ պապն է հայ թոռներին շուրջը հավաքած զարմանահրաշ քաներ պատմում:

Օտար հեքիաթների հայերենաշունչ ընկալմանն են նպաստում, մասնավորապես՝ անձնանունների հայկականացումը, զուտ հայկական խոսակցական կաղապարների, դիմելաձևերի և հայերեն դարձվածքային արտահայտությունների գործածությունը. օրինակ՝ Գրիմ եղբայրների հեքիաթներում՝ «աչքիս վրա», «թագավորի տղի աչքն էլ հենց ճամփին է լինում», «հողեմ գլուխդ», «ինքը թիզուկես, միրուքը գագուկես», «գետինը մտնեք դուք, գետինը», «կրակի վրա յուղ չեն ածիլ», «Էնքան սիրուն, Էնքան շարմաղ, որ էլ չուտես, չիմես, կանգնես ու մտիկ անես», «ո՛վ որ այբն ասել է, բենն էլ պետք է ասի», «ուրախանում, աշխարհքով մին են լինում». «ակաս-մակաս՝ էդ մոխրով տեղովդ հենց դու էիր պակաս», «ամեն բան սարքին-կարգին», «աչքերս կուլ են գնում», «արմանքից ու զարմանքից քշվում, վերանում են» և այլն:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թարգմանաբանությանը վերաբերող Հովհաննես Թումանյանի դատողությունները մի **ամբողջական հայեցակարգ են**, այսօր էլ մեթոդաբանական արժեք ունեն: Շրջանառում է նրա ամենահայտնի ձևակերպումը՝ տվյալ ազգի լեզվամշակութային կարողականությունը չափելու վերաբերյալ. «Շեքսպիրը դարձել է մի չափ ազգերի զարգացման աստիճանն որոշելու համար: Եթե մի ժողովուրդ նրան չի թարգմանում, կնշանակի տգետ է, եթե չի հասկանում, կնշանակի տհաս է. եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի տկար է»¹:

Իսկ քանի որ Շեքսպիրի թատերգությունների թարգմանությունը մշակութային իրողություն է դառնում նաև դրա հրապարակային հնչեցմամբ, ապա հասկանալի է Հովհաննես Թումանյանի խստությունը հաջող թարգմանության անհաջող առարկայացման առիթով. «Ես կարծում եմ ո՛չ հոր եղեռնական մահը, ո՛չ մոր շուտափույթ ամուսնությունը, ո՛չ հորեղ-

¹ **Հովհ. Թումանյան**, «Հավելտ», ողբերգություն Շեքսպիրի // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 53-54:

բոր ազգապիղծ վարմունքը, ո՛չ Օֆելիայի թեթևամտությունը, ո՛չ Պոլոնիոսի պալատական նենգավորությունը, ոչինչ, ոչինչ էնքան վիրավորական չպետք է լինեն դժբախտ Համլետի՝ էն առաջին ինտելիգենտի հոգու ազնվության, արքայազնի վեհության, փիլիսոփայի խորության, հանճարեղ նրբամտության ու վշտի ծանրության համար, որքան հայ դերասանի անճաշակ լավանությունը, վախկոտ հայացքները դես ու դեն, անմիտ վազվզելը պատից պատ, անտեղի աղաղակներն ու լաց ու կոծը կամ ռուս դերասանի հիստերիկ հեկեկոցներն ու հռհռոցները, հիվանդագին գալարումները, անդադար ծամածռությունները ու գոռում գոչումները»¹:

Ինչ վերաբերում է թարգմանչական աշխատանքին, ապա ոչ պակաս տարածված է նրա մյուս ասույթը. «Թարգմանությունը ապակու տակ դրած մի վարդ է. գրեթե անկարելի է, որ թարգմանիչը տա բնագրի հարագատ բույրն ու հրապույրը»²:

Այստեղ թվում է (մանավանդ՝ երբ նախադասության միայն առաջին կեսն է հիշատակվում), թե Հովհաննես Թումանյանն առհասարակ կասկածի տակ է առնում որակյալ թարգմանության հնարավորությունը կամ էլ ընդհանրապես անհնարին է համարում: Մինչդեռ կարդանք մտքի անմիջական շարունակությունը. «Սակայն միշտ պահանջելի է, որ նա հավատարիմ մնա գործի մտքին և հասկանալի տա ընթերցողին: Այս պահանջը մեծանում է մանավանդ, երբ թարգմանվում է այնպիսի մի երկ, որի ամեն մի խոսքն ու նախադասությունը, չափած ու կշռած, ունեն իրանց խոր նշանակությունն ու հաստատ տեղը»³:

Հովհաննես Թումանյանը շատ բարձր է գնահատել Հովհաննես Մասեհյանի շեքսպիրյան թարգմանությունները, հատկապես «Համլետ»-ը: Դրվատանքի է արժանանում հատկապես լեզվական համարժեքության հանգամանքը. «Շեքսպիրի գործին արժանի մի լեզու, անբռնազբոս ու հարուստ... Ի՞նչ արժանավայել ճոխությամբ է խոսում հայոց լեզուն»⁴: Որոշ

¹ **Հովհ. Թումանյան**, «Համլետի» չարչարանքի շաբաթը Թիֆլիսում // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 186–187:

² **Հովհ. Թումանյան**, Շեքսպիր. Համլետ // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 124:

³ Անդ:

⁴ **Հովհ. Թումանյան**, Թարգմանությունները և հրատարակությունները մեզանում // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 462, 463:

հատվածներ այնքան կատարյալ են, «էնքան կորովի ու թափով, որոնց հետ ռուսական լավագույն թարգմանությունները դժվար թե համեմատվեն»¹: Եվ այնուամենայնիվ, Հովհ. Թումանյանը շարունակ անդրադառնում է եղածին, համեմատում ռուսերեն նոր թարգմանությունների հետ, ձեռք բերում նաև անգլերենը և ստուգում բառարանների օգնությամբ, անում մի շարք ուշագրավ դիտարկումներ, արձանագրում լեզվական և սրբագրական բազմաթիվ սխալներ²:

Ընտրելով իրեն հոգեհարազատ, իր կարծիքով հայ ընթերցողի մտքին ու հոգուն պիտանի, հայկական մշակույթը հարստացնող թեմաներ՝ Հովհաննես Թումանյանը լավագույնս առարկայացրել է թարգմանչական աշխատանքի սեփական սկզբունքները ինչպես չափածո (Պուշկին, Լերմոնտով, Հայնե, Բայրոն, Շիլլեր, ռուսական բիլինաներ, սերբական վիպերգ և այլն), այնպես էլ արձակ (Գրիմ եղբայրների, նաև ռուսական, ճապոնական, հնդկական, իտալական, արաբական, իռլանդական հեքիաթներ) երկերի թարգմանության մեջ: Այնպես որ միանգամայն տեղին է հայ մեծ բանաստեղծի գրական ժառանգության այս հատվածի բարձր գնահատականը. հիրավի, այստեղ ևս «Թումանյանը եղել և մնում է անմրցելի, չգերազանցված ողջ հայ թարգմանական գրականության պատմության մեջ»³:

Գրականագետների միահամուռ կարծիքով՝ Հովհաննես Թումանյանի թարգմանական գլուխգործոցը Ալեքսանդր Պուշկինի «**Ձմեռվա իրիկունը**» քանաստեղծությունն է: Արժե մեկ անգամ էլ համոզվել դրանում:

Буря мглою небо кроет, Вихри снежные крутя; То, как зверь, она завоет, То заплачет, как дитя, То по кровле обветшало́й	Հողմը մեզով երկինքն առնում, Գալարում է բուքը ձյան, Մին՝ մանկան պես լաց է լինում, Մին՝ ոռնում է գերթ գազան.
--	---

¹ Անդ, էջ 461:

² Տե՛ս **Հովհ. Թումանյան**, «Համլետ», ողբերգություն Շեքսպիրի, էջ 54–81, Հովհ. Թումանյան, Շեքսպիր. Համլետ, էջ 125–130:

³ **Էդ. Ջրբաշյան**, Թումանյանի գրական ժառանգությունը, Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 109:

<p>Вдруг соломой зашумит, То, как путник запоздалый, К нам в окошко застучит.</p> <p>Наша ветхая лачужка И печальна и темна. Что же ты, моя старушка, Приумолкла у окна? Или бури завываньем Ты, мой друг, утомлена, Или дремлешь под жужжаньем Своего веретена?</p> <p>Выпьем, добрая подружка Бедной юности моей, Выпьем с горя; где же кружка? Сердцу будет веселей.</p> <p>Спой мне песню, как синица Тихо за морем жила; Спой мне песню, как девица За водой поутру шла.</p> <p>Буря мглою небо кроет, Вихри снежные крутя; То, как зверь, она завоет, То заплачет, как дитя. Выпьем, добрая подружка Бедной юности моей, Выпьем с горя: где же кружка? Сердцу будет веселей.</p>	<p>Մին՝ վայրենի սուլում պես- պես, Աղմբկում է տանիքում, Մին՝ ուշացած ճամփորդ, ա- սես, Լուսամուտն է նա թակում:</p> <p>Մեր խրրճիթը աղքատ ու հին, Ե՛վ մըթին է, ն՛ տըխուր. – Ի՞նչ ես նըստել պատի տա- կին, Իմ պառավըս, էդպես լուռ: Հոգնե՞լ ես դու փոթորիկի Ոնոցներից խելագար, Թե՞ նիբհում ես քո իլիկի Բըզզոցի տակ միալար:</p> <p>Արի խըմենք, բարի ընկեր Իմ սև, ջահել օրերի, Խըմենք դարդից, բաժակըդ բե՛ր, Միրտներըս բաց կըլինի: Երգի՛ր, ո՞նց էր ապրում խա- ղաղ Հավքը ծովի էն ափին, Երգի՛ր, ո՞նց էր աղջիկը վաղ Ջուրը գնում մինչ արփին:</p> <p>Հողմը մեզով երկինքն առնում, Գալարում է բուքը ձյան, Մին՝ մանկան պես լաց է լի- նում,</p>
--	--

	Մին՝ ռոնում է գերթ գազան: – Արի խմենք, բարի ընկեր Իմ սև՝, ջահել օրերի, Խըմենք դարդից, բաժակըդ Բեր, Միրտներըս բաց կըլինի:
--	---

Սա, հիրավի, լիարժեք թարգմանության դասական օրինակ է: Ձմռան երեկոյի ուրվագծված պատկերը երկու լեզվով էլ առաջացնում է միևնույն զգացողությունը՝ ցուրտ, անհրապույր, վիատեցնող օրվա ավարտ, աղմկոտ հողմապտույտը, ասես, ուր որ է խարխուլ խրճիթը պոկել, տանելու է: Մութ ու տխուր երեկո, սիրտ կեղեքող, թախծալի տրամադրություն: Այո, տխուր է, մութ է, ասում է քնարական հերոսը, բայց ինչո՞ւ տրվենք ձանձրությին և հուսահատությանը: Մենք երկուսս ենք, մեր հիշողությունները մեզ հետ են, խմենք, երգենք, մեր կյանքի վառ օրերը հիշենք, սիրտներս լայն բացենք: Եվ նման հանգուցալուծման մեջ ընթերցողը (և՛ ռուս, և՛ հայ) զգում է մարդկային փոխադարձ համակրանք ու ջերմություն:

Եթե խոսենք ժամանակակից թարգմանաբանության լեզվով, ապա, անտարակույս, այստեղ ապահովված է նկարագրական համարժեքությունը՝ ստույգ վերարտադրված է բնագրի թե՛ բովանդակությունը, թե՛ ձևն ու ոճը: Ապահովված է նաև թարգմանվող տեքստի գործաբանական (պրագմատիկ) իմաստը, այսինքն՝ բնագրի հեղինակի՝ ընթերցողին որոշակի խոհ հաղորդելու, հուզական տրամադրությամբ համակելու մտադրությունը նույնականորեն առկա է թարգմանվածի մեջ, այլ կերպ ասած՝ ռուսերեն բնագրի ընթերցողի և հայերեն թարգմանության ընթերցողի ընկալումը, ամենայն հավանականությամբ, նույնն է: Ասվածի լույսով՝ լիովին արդարացված են բառային փոխակերպումները. հայերեն ավելի համոզիչ է հենց «սիրտը բացելը», ոչ թե «սրտի ուրախ լինելը»: Մենք գիտենք, որ կարդում ենք Ալեքսանդր Պուշկինի գրածը, այլ կերպ ասած՝ մեր առջև է ռուսական մշակույթի մի պատառիկ, որը, սակայն, մենք ընկալում ենք հարազատորեն, որպես հայկական մշակույթի մաս դարձած իրողություն:

Առհասարակ, գեղարվեստական թարգմանությունը ստեղծագործության տեսակ է՝ առավել դժվարին իրագործելի մանավանդ բանաստեղծ թարգմանչի համար. չէ՞ որ միշտ կա բնագրի հեղինակի ստեղծած պատկերը յուրովի, սեփական ստեղծագործական բնագրին և ճաշակին համապատասխան վերափոխելու գայթակղության վտանգ. նման դեպքերում իր կատարածը թարգմանիչը, սովորաբար, անվանում է «փոխադրություն». այդպես, օրինակ, Հովհաննես Թումանյանն է Միխայիլ Լերմոնտովի «Իդա» բանաստեղծության իր թարգմանությունն անվանել: Իսկ որ Ա. Պուշկինի «Ձմեռվա իրիկունը» բնավ էլ պատահաբար չի ընտրվել, այլ, Արսեն Տերտերյանի վերոբերյալ մտքի հաստատումն է, այսինքն՝ Հովհ. Թումանյանի մտքի և հույզի յուրատեսակ թարգմանը, հաստատում է բանաստեղծի դուստրը՝ Նվարդ Թումանյանը. «Կարդացեք ու տեսեք, – ասել է Թումանյանը, – թե ինչքան է սե՛ղմ, գեղեցի՛կ և ուժեղ. մի ավելորդ բառ չեք գտնի»¹: Ճիշտ նույն բնութագրումն անվարան կարող ենք գործածել թարգմանվածի համար:

Իհարկե, Հովհաննես Թումանյանի մյուս թարգմանություններն էլ չեն զիջում դիտարկված օրինակին: Բնագրի և թարգմանվածի ևս մի զույգ դիտարկենք. այս անգամ կբավարարվենք Ալեքսանդր Պուշկինի «Ջրահեղձը» բանաստեղծության առաջին տան համեմատությամբ: Եթե առաջին օրինակում համոզվում ենք երկու լեզվով նկարագրված պատկերի լիակատար նույնականության մեջ, ապա այս դեպքում մեզ զարմացնում և հիացնում է ժողովրդախոսակցական մակարդակի լեզվի անթերի նույնական մատուցումը:

<p>Прибежали в избу дети Второпях зовут отца: «Тятя! тятя! наши сети Притащили мертвеца». «Врите, врите, бесенята, – Заворчал на них отец; – Ох, уж эти мне ребята!</p>	<p>Ներս վազեցին մանուկները Ու կանչում են հորն ըշտապ. – Ա՛յի, ա՛յի, ե՛կ, մեր թոռը Մեռել հանեց գետի ափ: – Սուտ եք ասում, շա՛ն լակոտներ, Գոռաց հայրը ահաբեկ.</p>
---	---

¹ Ա. Թումանյան, Հուշեր և զրույցներ, Եր.: Էդիթ Պրինտ, 2009, էջ 138:

Будет вам ужо мертвец!	Ըսպասեցեք դուք հալա դեռ, Մեռելն հետո կըտեսնեք:
------------------------	---

Հաստատ չենք կարող ասել, թե ռուս ընթերցողն ինչպես է ընկալում երեխաներին «սատանա» անվանելը, թեկուզ կատակով, բայց հայերիս համար «շան լակոտ» ասելը իմաստային գուգորությունների շատ լայն տիրույթ ունի՝ կոպիտ վիրավորանքից մինչև գորովանքի և դրվատանքի արտահայտություն, ուստի թարգմանիչը անվրեպ է գործել. տվյալ իրավիճակում հայրը ոչ այնքան զայրանում, որքան զարմանք, շփոթմունք ու անվստահություն է հայտնում իր չարաճճի զավակների հայտարարությանն ի պատասխան:

Իրեն բնորոշ պահանջկոտությամբ և հստակությամբ կատարելով մի շարք արժեքավոր թարգմանություններ (շուրջ 80 գործ)¹, Հովհաննես Թումանյանը նաև ձևակերպել է **թարգմանական աշխատանքի փիլիսոփայությունը**. «Ճաշակով ընտրություն, լավ լեզու, խնամքով հրատարակություն: Էս երեք պայմանը պետք է ունենանք»²:

Այս երեք հիմնարար պայմանները փաստորեն սեղմ արտահայտում են թարգմանական ստեղծագործության մարմնավորման ընթացքը.

«Ճաշակով ընտրությունը» մեկ այլ մշակույթից սեփական լեզվամշակութային իրողություն տեղափոխվելու արժանի և այդ իրողությունը հարստացնելու ունակ գործի ընտրությունն է: Սա, իհարկե, մեծավ մասամբ նախապատրաստական բնույթի համակողմանի աշխատանք է, ինչպես ընդունված է ասել՝ «նախաթարգմանական աշխատանք», որը ենթադրում է և թարգմանչից պահանջում համապատասխան «ֆոնային» կամ «հենքային» գիտելիք³:

¹ Տե՛ս «Հովհաննես Թումանյանի թարգմանական գոհարները», Եր.: Իրավունք, 2008:

² **Հովհ. Թումանյան**, Թարգմանությունները և հրատարակությունները մեզանում // ԵԼԺ, հատ. վեցերորդ, Եր., 1994, էջ 460:

³ Տե՛ս **Ար. Քամայան**, Թարգմանության տեսության հիմունքներ, Եր.: Երևանի պետական համալսարանի հրատ., 2020, էջ 25–30:

Տարօրինակն այն է, որ այս՝ տեսական բարձր մակարդակով և գործնական հարուստ նյութով հանդերձ ուսումնական ձեռնարկում, **ոչ մի հիշատակում չկա Հովհաննես Թումանյանի մասին**՝ ո՛չ նրա կատարած թարգմանությունների, ո՛չ էլ թարգմանաբանական բնույթի դատողությունների մասին: Առավել տարօրինակն այն է, որ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի խորհուրդն է հանգիստ խղճով գիրքը երաշխավորել հրատարակության: Իսկ մի՞թե հայ ապագա բանասերը, թարգմանիչը, լեզվաբանը

«**Լավ լեզուն**»՝ որպես թարգմանական աշխատանքի հանրագումարային բնութագիր, ներառում է երկու լեզուների և մշակույթների քաջ իմացություն, հատկապես սեփական լեզվի հարստությունը (բառապաշարը, շարահյուսական ճկունությունը, բառակազմական դյուրությունը, ժամանակաձևերի առանձնահատկությունները և այլն) գործադրելու հմտություն, նաև տրամաբանորեն շարադրելու կարողություն, բնագրին հնարավորինս հարազատ մնալու և անհարկի միջարկություններից խուսափելու պարտավորվածություն, իմաստային համարժեքություն ապահովելու հմտություն և այլն:

«**Խնամքով հրատարակություն**»՝ խմբագրական, սրբագրական, մեկնաբանական-խորհրդատվական համապատասխան աշխատանք, գրքի որակյալ տպագրություն և գրավիչ մատուցում ընթերցողին:

Կան նաև ածանցյալ պահանջ-պայմաններ.

✓ Թարգմանիչը պետք է ունենա պատասխանատվության զգացում թարգմանվող հեղինակի և նրա գործի հանդեպ, ընդ որում այնքան ավելի մեծ պատասխանատվություն, որքան ավելի նշանակալի է տվյալ գործը իր սեփական մշակութային համակարգում¹:

✓ Թարգմանիչը պարտավոր է հավատարիմ մնալ բնագրին, այսինքն՝ պիտի հնարավորինս ճիշտ ըմբռնի և հայտնի հեղինակի միտքը, ընդ որում դարձյալ այնքան ավելի հավատարիմ, որքան ինքնին արժեքավոր է տվյալ ստեղծագործությունը²:

✓ Ցանկալի է որոշակի ծանոթագրություններ տալ, բացատրելու և մեկնաբանելու ընթերցողի համար բնագրի որոշ մութ, դժվարըմբռնելի հատվածները, առանձին անուններ և դարձվածքային արտահայտություններ ու բառախաղեր³:

✓ Անցանկալի է ընթերցողին և քննադատին կանխավ «կաշառելը»՝ տարատեսակ վերապահումներ անելով թարգմանության բարդություններ-

առաջին հերթին հենց Թումանյանից չպիտի սկսի թարգմանության այբուբենին ծանոթանալը... Ոմանց էլ, թերևս, հարկ կա հիշեցնելու, որ, այնուամենայնիվ, **հայ թարգմանաբանության հիմնադիրը Հովհաննես Թումանյանն է:**

¹ **Հովհ. Թումանյան**, Շեքսպիր. Համլետ, էջ 124:

² Տե՛ս **Հովհ. Թումանյան**, «Համլետ», ողբերգություն Շեքսպիրի, էջ 57:

³ Անդ, էջ 55:

րի վերաբերյալ և ներողամտություն հայցելով¹: Թարգմանիչը միշտ պետք է ելնի ընթերցողի՝ անկաշառելիության և պահանջկոտության յուրատեսակ կանխավարկածից. «Մենք, ընթերցողներս, չենք կարող և իրավունք էլ չունենք ներողամիտ լինելու, եթե Շեքսպիրի **փոխադրողը** բնագրից շեղվում է, տալիս է մի համանման բան, այն էլ ոչ այնքան ընտիր»²:

✓ Միաժամանակ, թարգմանչական աշխատանքն ինքը կարոտ է լուրջ քննադատության. վերստին՝ որքան արժեքավոր է թարգմանության բնագիրը, այնքան ավելի լուրջ և խոր քննադատության կարիք կա³:

«Լուրջ»՝ հանգամանակից, հիմնավոր և բարյացակամ քննադատության օրինակներ Հովհաննես Թումանյանն ինքն է տվել: Այդպիսին է Նահապետ Քուչակի և Սայաթ-Նովայի թարգմանությունների մասին նրա հոդվածը⁴: Նախապես գոհունակություն և շնորհակալություն հայտնելով թարգմանչին՝ Վալերի Բրյուսովին, մանավանդ հայ ժողովրդի և հայկական մշակույթի մասին նրա դրվատական նախաբանի և մեկնաբանությունների համար, միաժամանակ Հովհ. Թումանյանը մի քանի դիտողություն է անում «ազնիվ թարգմանչին ու իր աջակիցներին», վստահություն հայտնելով, թե «ավելի զգուշավոր վերաբերմունքով ավելի շատ կարողանան խուսափել ակամա սխալներից»⁵:

Թարգմանական աշխատանքը պիտի գնահատվի նաև համեմատության մեջ, այսինքն՝ երբ միևնույն գործը մի քանիսն են թարգմանում: Վերստին այքի առաջ ունենալով Քուչակի և Սայաթ-Նովայի ռուսերեն մի քանի նախորդ թարգմանությունները՝ Հովհաննես Թումանյանը շատ բարձր է գնահատում է Վ. Բրյուսովի կատարած աշխատանքի որակական առանձնահատկությունը. «...Առաջին անգամն է, որ պ. Բրյուսովը

¹ Անդ, էջ 58:

² Անդ, էջ 66:

³ Անդ:

⁴ Տե՛ս **Հովհ. Թումանյան**, Քուչակ նահապետի և Սայաթ-Նովայի ռուսերեն թարգմանությունների առթիվ // ԵԼԺ, հատ. յոթերորդ, Եր., 1995:

Այդ «լուրջը» երբեմն արտահայտվում է թումանյանական նշանավոր հումորով: Այսպես, երբ Վ. Բրյուսովը հարցնում է Հովհ. Թումանյանի կարծիքը «Անուշ» պոեմի Վյաչեսլավ Իվանովի թարգմանության մասին, լսում է հետևյալ պատասխանը. «Լավ է, բայց ավստ~ս իմ Անուշը չէ, նրանը շեկ է դուրս եկել» (Ն. Թումանյան, Հուշեր և գրույցներ, էջ 138):

⁵ Անդ, էջ 198:

թարգմանում է վարպետի ձեռքով՝ աշխատելով հաղթել գրեթե անհաղթելի արգելքների և ինչպես Սայաթ-Նովայի, էնպես էլ Նահապետ Քուչակի երգերը տալ ռուսերեն, խորապես ճանաչելով նրանց մեծությունը և ինքնուրույն շունչն ու երանգը, և նրանց գործերը անվանելով հայ ժողովրդի ազնվականության վկայական»¹:

Վալերի Բրյուսովն ինքը նշանավոր բանաստեղծ է, և որպես այդպիսին կարող է և իրավունք ունի գնահատելու ուրիշ ազգի մշակութային արժեքները և իր գնահատականով նաև ճիշտ կողմնորոշելու ռուս ընթերցողին: Թարգմանվող գրականությունը լիակատար հիմքով որպես տվյալ ժողովրդի բարձր մշակույթի, ոգեղենության, «ազնվականության վկայական» անվանելը, ըստ Հովհաննես Թումանյանի, թարգմանական աշխատանքի բացառիկ կարևորության գործառույթներից մեկն է, գրական գործերի միջոցով ժողովուրդների հոգեկան կապի հաստատման, միջմշակութային ճանաչման հնարավորության ստեղծումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ահավասիկ Հովհաննես Թումանյանի ամփոփիչ միտքը՝ որպես մեզ համար խրատ, խորհուրդ, մտորումների նյութ և գործունեության ուղեցույց. «Մենք ունեցել ենք էդ բարձր վկայականը, բայց էդ վկայականը մնացել է մեր գրպանում, կարդացող չի եղել, դրա համար էլ չունենք էն մեծ փոխադարձ շաղկապը ուրիշ ժողովուրդների հետ: Մենք ենք միայն օտարների հանճարները ճանաչել, սիրել ու սրտով կապվել նրանց հետ, իսկ մեր ցեղի հանճարը ոչ ոք չի ճանաչել, դրա համար էլ մեզ ոչ ոք չի գնահատել, չի սիրել ու հոգեպես չի կապվել մեզ հետ»²:

Այս հանգամանքի ըմբռնումից բխում է մի պարզ հարց, որ ժամանակին Հովհաննես Թումանյանն է տվել ինքն իրեն և ընթերցողին, մենք էլ կարող ենք, դեռ ավելին՝ պարտավոր ենք կրկնել ներկա աշխարհաքաղաքական պայմաններում. իսկ կարողանում ենք արդյոք մենք՝ հայերս, մյուս ժողովուրդներին հարկ եղածի չափ մատուցելու ինքներս մեզ, մեր «ազնվականության վկայականը»: Մանավանդ՝ գաղտնիք չէ, որ այժմ որոշ

¹ Անդ, էջ 203:

² Անդ, էջ 204:

հակահայ ուժեր, թերարժեք ազգերի ներկայացուցիչներ, ծախու գրչակներ անդու կերպով տեղեկատվական աղբ են տարածում՝ նսեմացնելով հայոց պատմությունը, մշակույթը, աշխարհին աղճատված ձևով մատուցելով հայ մարդու կերպարը:

Ուստի և ամբողջ աշխարհին հայ փիլիսոփայության, գրականության և պոեզիայի գլուխգործոցների, հայոց պատմության հերոսական էջերի, հայ մարդու ազնվական կերպարի մատուցումը թարգմանչական աշխատանքի միջոցով ներկայում դարձել է մեր կենսապայքարի ամենակարևոր գործիքներից մեկը:

Валерий Мирзоян, Переводческое искусство Ованеса Туманяна – В статье обсуждается один из важных аспектов творчества великого армянского писателя Ованеса Туманяна (1869–1923). Он много и серьезно занимался переводом как поэтических, так и прозаических произведений. Вершиной его переводческого мастерства принято считать перевод на армянский язык стихотворения Александра Сергеевича Пушкина «Зимний вечер». В данной статье проводится сравнение текстов на двух языках с целью выяснения степени идентичности как их прагматического смысла, так и языковых средств выражения.

Пристальное внимание уделял Ованеса Туманян также и методологическим вопросам переводческой деятельности. Суть философии перевода он сжато сформулировал в трёх основных требованиях: искусный отбор оригинала, отличный язык и безукоризненное издание. Существуют еще несколько правил: у переводчика должно быть высокое чувство ответственности перед автором и его произведением; он должен по возможности оставаться верным содержанию и смыслу оригинала; желательно снабдить перевод пояснительными примечаниями; недопустимо заранее «подкупать» читателя ссылками на трудности перевода; хороший перевод нуждается в серьезной критике.

Ованеса Туманян высоко ценил роль удачных переводов в межкультурной коммуникации народов, в частности он отмечал, что если существует достаточное количество переводов с других языков на армянский

язык, то очень мало обратных переводов, между тем это крайне важно для того, чтобы другие народы смогли составить верное представление о нас.

Valery Mirzoyan, Translation art of Hovhannes Tumanyan – The article discusses one of the important aspects of the work of the great Armenian writer Hovhannes Tumanyan (1869–1923). He was a lot of and seriously engaged in the translation of both poetic and prose works. The pinnacle of his translation skills is considered to be the translation into Armenian of Alexander Sergeevich Pushkin's poem «Winter Evening». This article compares texts in two languages in order to determine the degree of identity of both their pragmatic meaning and linguistic means of expression.

Hovhannes Tumanyan also paid close attention to the methodological issues of translation activities. He succinctly formulated the essence of the philosophy of translation in three basic requirements: skillful selection of the original, excellent language, and impeccable edition. There are a few more rules: the translator must have a high sense of responsibility towards the author and his work; it should, as far as possible, remain true to the content and meaning of the original; it is desirable to provide the translation with explanatory notes; it is unacceptable to "bribe" the reader in advance with references to translation difficulties; a good translation needs serious criticism.

Hovhannes Tumanyan highly appreciated the role of successful translations in the intercultural communication of peoples, in particular, he noted that if there are a sufficient number of translations from other languages into Armenian, then there are very few reverse translations, meanwhile it is extremely important for other peoples to be able to compile the correct idea about us.

Ուղարկվել է խմբագրություն 07.03.2023թ.

Գրախոսվել է 11.03.2023թ.

Ստորագրվել է տպագրության 15.03.2023թ.